



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



**Ս. ԲԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՅ ՕԾՄԱՆ 20-ԱՄԵԱԿ ԵՒ  
ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ**

Կիրակի, 16 Նոյեմբերին, Օրենճ Բառնթի ծխական մեր համայնքը հանդիսաւորապէս պիտի նշէ Սրբոց Բառասնից Մանկանց եկեղեցւոյ օծման 20-ամեակը:

Այս առիթով, Կիրակի, 16 Նոյեմբերին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ Օրենճ Բառնթի Սրբոց Բառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ: Ս. Խորանին պիտի սպասարկէ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Հրանդ Զինյ. Երեցեան:

Շաբաթ, 15 Նոյեմբերի երեկոյեան, եկեղեցւոյ տարեդարձին նուիրուած ճաշկերոյթ մը տեղի պիտի ունենայ եկեղեցւոյ կից «Ղուկասեան» սրահին մէջ: Ձեռնարկը կը վայելէ Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնը եւ կազմակերպուած է եկեղեցւոյ հոգեւոր հովիւին, հոգաբարձութեան, Տիկնանց Միութեան եւ 20-ամեակի յանձնախումբին կողմէ:

**20<sup>th</sup> ANNIVERSARY OF THE CONSECRATION OF  
FORTY MARTYRS CHURCH**

On Sunday, November 16<sup>th</sup>, the Orange County community will celebrate the 20<sup>th</sup> anniversary of the consecration of Forty Martyrs Church. On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon. The Prelate will be assisted at the altar by parish pastor Rev. Fr. Hrant Yeretjian.

The 20<sup>th</sup> anniversary banquet, organized by the parish Pastor, Board of Trustees, Ladies Auxiliary, and 20<sup>th</sup> anniversary committee, will take place at "Gugasian" Hall on the evening of Saturday, November 15<sup>th</sup>.

\*\*\*

**ՍՓԻՒՔԻ ՀԱՐՑԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՆՈՅԸ ՅԱԿՈՒԲԵԱՆԻ  
ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՉԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ**

«Հայաստան» Հիմնադրամի Թելեթոնին նախօրեակին, Հայաստանի

կառավարութեան անդամներէն՝ Սփիւռքի հարցերու նախարար Զրանոյշ Յակոբեան հիւրաբար Լոս Անճելըս պիտի հասնի յառաջիկայ շաբաթ, մօտէն ծանօթանալու համար մեր գաղութին ու ազգային հաստատութեանց:

Զինգշաբթի, 20 Նոյեմբերի կէսօրին, նախարարուհին պաշտօնական այցելութիւն մը պիտի տայ Ազգային Առաջնորդարան եւ պիտի ընդունուի Առաջնորդ Սրբազան Զօր, Կրօնական Ժողովի ու Ազգային Վարչութեան կողմէ:

## **MINISTER OF DIASPORA AFFAIRS HRANUSH HAKOBYAN TO VISIT THE PRELACY**

On the eve of the 11<sup>th</sup> annual Armenia Fund Telethon, in the coming week Minister of Diaspora Affairs Hranush Hakobyan will arrive in Los Angeles on an official visit to become familiarized with our community and establishments.

On Thursday, November 20<sup>th</sup>, the Prelate, councils, and community members will welcome Ms. Hakobyan to the Prelacy. A reception has been organized in her honor.

\*\*\*

## **ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՏԱՐՈՒԱՆ ՆՈՒԻՐՈՒԾ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԵԱՆՑ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԵՐԵԿՈՅ**

Քրիստոնեական Դաստիարակութեան տարուան նուիրուած դասախօսութեանց ձեռնարկներուն վերջինը տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 25 Նոյեմբերի երեկոյեան ժամը 7:30-ին, Կլենտելլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Պիտի դասախօսէ եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Արտակ Զինյ. Տեմիրճեան:

Դասախօսութեան նիւթն է՝ «Ս. Ներսէս Շնորհալի Զայրապետի գրական նպաստը հոգեւոր արթնութեան եւ Քրիստոնեական դաստիարակութեան կալուածին մէջ»:

Դասախօսութեան պիտի յաջորդէ Սուրբ Գրոց սերտողութիւն՝ առաջնորդութեամբ Զոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեանի:

## **CONCLUSION OF THE “YEAR OF CHRISTIAN EDUCATION” LECTURE SERIES**

Throughout the year, a number of lectures have taken place in our parishes in celebration of “The Year of Christian Education”.

The last lecture in this series will take place on Tuesday, November 25<sup>th</sup>, at 7:30 p.m., at St. Mary’s Church in Glendale.

The topic, “St. Nerses the Graceful’s Literary Bequest to Spiritual Awakening and Christian Education” will be presented by Rev. Fr. Ardak Demirjian.

The lecture will be followed by Bible study led by Very Rev. Fr. Barthev Gulumian.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆՈՐՀԱԽՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ ՅՂԵՑ ԸՆՏՐԵԱԼ ՆԱԽԱԳԱՅ ՊԱՐԱՔ ՕՊԱՄԱՅԻ**

Միացեալ Նահանգներու մէջ 4 Նոյեմբերին տեղի ունեցած ընտրութեանց արդիւնքներուն լոյսին տակ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, յանուն մեր Թեմին հոգեւորականաց դասուն եւ ժողովականութեան, շնորհաւորական նամակներ յղեց ընտրեալ նախագահ Պարաք Օպամայի, փոխ նախագահ Ճօ Պայտընի եւ Զալիֆորնիայէն Զոնկրեսի անդամ ընտրուած ներկայացուցիչներուն:

Ընտրեալ նախագահին ուղղուած իր շնորհաւորանքի խօսքերուն կողքին, Առաջնորդ Սրբազանը կ’անդրադառնայ ամերիկեան այս հայրենիքի պետական ընտրեալ պատասխանատուներուն հետ հայ համայնքի անցեալի գործակցութեան, վեր կ’առնէ ամերիկեան այս ափերուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան շինիչ դերակատարութիւնը՝ վերջին յիսուն տարիներուն, եւ յոյս կը յայտնէ, որ գործակցութիւնը պիտի ապրի զարգացում: Ան յատկապէս բարձր կը գնահատէ Օպամայի ազնիւ ու արդար կեցուածքը՝ Հայկական Յեղասպանութեան հարցին նկատմամբ, յոյս յայտնելով, որ Միացեալ Նահանգներ միանաւ Յեղասպանութիւնը ճանչցող երկիրներուն:

## **PRELATE CONGRATULATES PRESIDENT-ELECT BARACK OBAMA**

Following the presidential elections of November 4<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, sent a congratulatory letter to President-elect Barack Obama and Vice President-elect Joe Biden on behalf of the Prelacy Councils and the Armenian community of the Western United States. The Prelate also sent congratulatory letters to re-elected Congress members representing the state of California.

In his letter the Prelate referenced the long history of collaboration between the Armenian community and elected officials, and expressed confidence that the cooperative relationship will continue for years to come. The Prelate in specific commended President-elect Obama’s and Vice President-elect Biden’s principled stand on the Armenian Genocide and expressed hope that with their continued support and efforts we will see progress in our cause.

\*\*\*

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆՆ ՈՒ ԱՉԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ  
ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ԴԱԹԵԱՆ-ՄԱՐԻԱՄԵԱՆ ԿՐԹ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ  
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ**

Երեքշաբթի, 11 Նոյեմբերի երեկոյեան, Դաւթեան-Մարիամեան Կրթական Հաստատութեան Նորընտիր վարչութեան անդամները այցելութիւն մը տուին Ազգային Առաջնորդարան եւ հիւրընկալուեցան Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ու Ազգային Վարչութեան կողմէ: Պատուիրակութիւնը կը գլխաւորէր վարչութեան ատենապետը՝ Տիար Վահիկ Ծատուրեան:



Հիւր վարչականները, Ազգային Վարչութեան ժողովին ներկայանալով, ընդհանուր գիծերու մէջ տեղեկութիւններ փոխանցեցին այն աշխատանքին մասին, զոր այս հաստատութիւնը կը տանի հայեցի ուսում ջամբելու համար հանրային վարժարաններ յաճախող աւելի քան հազար աշակերտներու: Անոնք բացատրեցին, որ աւելի քան երկու

տասնամեակ առաջ սկիզբ առած դաստիարակչական ծրագիրը կը նպատակադրէ հայերէն լեզու, մշակոյթ, պատմութիւն եւ ընդհանրապէս հայկականութիւն ներարկել պատանի հայ աշակերտներու, որոնք այլապէս առիթ չունին հայեցի դաստիարակութեան: Աշխատանքը կը տարածուի շուրջ 20 վարժարաններու վրայ, Կլենտէյլի ու մօտակայ ավաններու մէջ: Այս գործին լծուած են շուրջ 50 հայ ուսուցիչներ ու դաստիարակներ, ինչպէս նաեւ վարչական պատասխանատուներ:

Ներկայացուցիչները շնորհակալութեան խօսք ուղղեցին Առաջնորդ Սրբազանին ու Ազգ. Վարչութեան, որոնք զօրավիգ ու աջակից են իրենց աշխատանքներուն:

Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. վարչութիւնը բարձր գնահատեցին Դաւթեան-Մարիամեան Հաստատութեան սերնդակերտ գործը ու պատրաստակամութիւն յայտնեցին կարելի միջոցներով շարունակելու գործակցութիւնը:

**PRELATE AND EXECUTIVE COUNCIL WELCOME NEW BOARD  
OF DAVIDIAN & MARIAMIAN EDUCATIONAL FOUNDATION**

On the evening of Tuesday, November 11<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the Executive Council welcomed to the Prelacy the newly elected board members of Davidian & Mariamian Educational Foundation. The delegation was led by Chairman Mr. Vahik Satorian.

During the meeting of the Executive Council, the new board members presented the efforts of the foundation to provide Armenian language, culture, and history instruction to the large number of Armenian students attending public schools. They stated that the work they began more than twenty years ago continues and has grown to encompass twenty schools and fifty teachers and staff members. The board members concluded their report by thanking the Prelate and council members for their constant support and encouragement.

The Prelate and Executive Council highly commended their devoted efforts and reaffirmed their continued support and collaboration.

\*\*\*

### **ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԶՐԵՍԵՆՔԱ ՀՈՎԻՏԻ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑՒՅՑ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐԶԻՆ ԱՌԻԹՈՎ**

Կիրակի, 9 Նոյեմբերին, Եպիսկոպոսական Ս. Պատարագ մատուցուեցաւ Զրեսենթա Հովիտի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ մէջ, ծուխի հաստատման երրորդ տարեդարձին առիթով:

Ս. Պատարագը մատուցանեց եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը փոխանցեց Առաջնորդ Սրբազան Հայրը: Ս. Խորանին սպասարկեց եկեղեցւոյ հոգեւոր մատակարար Արժ. Տ. Արտակ Քինյ. Տեմիրճեան:

Քարոզին մէջ Սրբազան Հայրը գլահատեց եկեղեցւոյ հոգեւոր մատակարարը, ինչպէս նաեւ Ազգ. երեսփոխաններու, Հոգաբարձութեան, Տիկնանց Միութեան, Դպրաց եւ Սակաւագաց դասերու, երգչախումբին եւ յարակից մարմիններու անդամներու ժրջան գործունեութիւնը, մաղթելով որ մօտիկ ապագային իրականութիւն դառնայ սեփական կալուածով եկեղեցի մը ունենալու բոլորին փափաքն ու երազանքը:

Յաւարտ Ս. եւ անմահ պատարագին, պատարագիչ Սրբազան Հայրը «Ուրախ Լեր»ի երգեցողութեամբ առաջնորդուեցաւ եկեղեցւոյ գաւիթը, ուր նաեւ ներկայ հաւատացեալներ խանդավառ մթնոլորտի մէջ երգեցին «Կիլիկիա»ն: Ապա Առաջնորդ Սրբազան Հօր պահպանիչով եւ օրհնութեամբ իր աւարտին հասաւ օրուան հոգեպարար մթնոլորտը:

Եկեղեցւոյ Տիկնանց Միութեան գեղեցիկ սովորութիւններէն մէկը դարձած սիրոյ ճաշը, դարձեալ մեկտեղեց հաւատացեալները, եկեղեցւոյ կից գտնուող սրահին մէջ, ուր Սրբազան Հօր սեղանի օրհնութենէն ետք ներկաները մասնակից եղան սիրոյ ճաշին, որմէ ետք հոգեւոր ուրախութեամբ լիցքաւորուած հաւատացեալները քաղցր յուշերով մեկնեցան իրենց տուները:

Եկեղեցւոյ երրորդ տարեդարձին նուիրուած ճաշկերոյթը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 14 Նոյեմբերի երեկոյեան, Կլենտէյլի Brandview Collection սրահին մէջ: Ձեռնարկը կը վայելէ Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնն ու ներկայութիւնը եւ կազմակերպուած է եկեղեցւոյ հոգեւոր մատակարարին, Հոգաբարձութեան եւ Տիկնանց միութեան կողմէ:

## **THIRD ANNIVERSARY OF THE CRESCENTA VALLEY PARISH CELEBRATED**

On Sunday, November 9<sup>th</sup>, the Crescenta Valley parish celebrated its third anniversary. In honor of this occasion the Prelate celebrated Divine Liturgy and delivered the sermon at the parish. He was assisted at the altar by parish pastor Rev. Fr. Ardak Demirjian.

In his sermon the Prelate commended the Pastor, Delegates, Board of Trustees, Ladies Auxiliary, altar servers, choir members, and all the volunteers for their hard work and efforts over the past three years and the progress they have achieved thus far, expressing hope for the parish to have its own church in the near future.

Following the service, the Prelate and congregation headed to the adjacent hall for a reception that had been organized by the Ladies Auxiliary.

The third anniversary banquet will take place on the evening of Friday, November 14<sup>th</sup>, at Brandview Collection in Glendale, under the auspices of and with the participation of the Prelate.

\*\*\*